

# ՄԱԿ-Ը ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՓԱԿԵԼ ԳԱԱ-Ն

Գիտությունների ազգային ակադեմիային ստյառնում է իստյառ վերացում:

Բանն այն է, որ 2005 թվականի աշնանը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի մի խումբ փորձագետներ ուսումնասիրություններ են կատարել Հայաստանի գիտության եւ կրթության ոլորտում եւ արդյունքում Հայաստանի կառավարությանն ու ակադեմիայի նախագահությանն ուղարկել մի նախագիծ, որը նախատեսում է գիտության կազմակերպման հիմնավոր վերակառուցում: Իսկ ավելի կոնկրետ, ՄԱԿ-ի փորձագետներն առաջարկում են ընդհանրապես վերացնել Գիտությունների ազգային ակադեմիան կամ այն դարձնել հասարակական կազմակերպություն: Իսկ ԳԱԱ համակարգում գործող չորս տասնյակ գիտահետազոտական ինստիտուտների մի մասն, ըստ սույն նախագծի, ղեկավարվում է անցնեն տարբեր բուհերի ենթակայության

տակ, մի մասն էլ ընդհանրապես փակվեն: ՄԱԿ-ում, սակայն, առայժմ փորձ է արվում զաղտնի ղեկավար սույն ծրագիրը: Երեկ մեզ հայտնի դարձավ, որ գիտաշխատողների շրջանում հզոր դժգոհություն է խուսափելու նախատեսված ՄԱԿ-ում Ամանորից առաջ հետաձգել են անգամ ծրագրի շնորհանդեսը:

Հասկանալի է, որ առաջարկվող տարբերակը ԳԱԱ-ում լուրջ դժգոհություն է առաջացրել: Ու հիմնա շատ ու շատ ակադեմիկոսներ ղեկավարվում են անհամաձայնությամբ: Երեկ մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ որոշ ակադեմիկոսներ հայտարարում էին անգամ, որ աշխարհում կան հրեամասոնական խմբեր, որոնք ցանկանում են քանդել Հայաստանը եւ ՄԱԿ-ի առաջարկած այս ծրագիրը, որն ակադեմիան զրկելու է ղեկավար

հովանավորությունից, արդեն կործանում է նշանակում: Ստեղծված իրավիճակի շուրջ օրերս հայտարարություն է տարածել Հայաստանի Գրողների միության նախագահությունը: Ընդունելով, որ վերջին տասնհինգ տարիների ընթացքում գիտության կազմակերպման բնագավառում բազմաթիվ խնդիրներ են առաջացել, ՀԳՄ նախագահությունը գտնում է, որ դրանք ղեկավարվում են լուծվեն մեր կառավարության եւ գիտնականների համատեղ ջանքերով, մանավանդ որ, ըստ ՀԳՄ նախագահության, ԳԱԱ-ն ընկալվում է որպես ազգային ղեկավարության բաղադրիչ: Ինչպես, գիտության ոլորտում ռեֆորմներ սկսելու համար հայաստանյան մի շարք ակադեմիկոսներ ունեն բոլորովին այլ ծրագրեր: Սակայն մինչ այժմ գիտության բարեփոխման համար ներկայացված ցանկացած ծրագիր ղեկավարաբար դատադատվում է անհաջողության: Իհարկե, չի կարելի ղեկավարել, որ ՄԱԿ-ի առա-

ջարկած տարբերակը լավագույնն է: Բայց փաստ է նաեւ այն, որ ԳԱԱ բարեփոխումների խնդիրը վաղուց է հասունացել, քայքայված ակադեմիական ծերակուտին ստեղծված վիճակը կարծես ձեռնադրում է: ԳԱԱ նախագահ Ֆրեդերիկ Սարգսյանին էլ զարմանալիորեն հաջողվում է դուրս գալ անգամ իրեն ներկայացված՝ ամենալուրջ մեղադրանքների տակից: Բացի այս 82-ամյա Սարգսյանը օրերի խախտումներով 3 անգամ անընդմեջ «ընտրվել» է ԳԱԱ նախագահ: Այնպես որ մեծ է հավանականությունը, որ ակադեմիական համակարգում առկա ստատուս քվոն կդադարանա, մանավանդ որ ԳԱԱ հաջորդ նախագահի ամենալուրջ հավակնորդ է համարվում ԵՊՀ ղեկավար Ռադիկ Մարտիրոսյանը: ՀՀ իշխանության վերնախավի վստահելի համարվող Մարտիրոսյանը դժվար թե համաձայնի ԳԱԱ անունով հ/կ ղեկավարի դերին:

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ